2582

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4/2

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ և «Արմանշին» ՍՊԸ Կոնսորցիումի միջև 2025թ. հուլիսի 8-ին կնքված N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-1 ծածկագրով Պետության կարիքների համար Կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «25» 12 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ և «Արմանշին» ՍՊԸ Կոնսորցիումը**, ի դեմս **«Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Կոստանյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա և **«Արմանշին» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա.Խաչատրյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 01/34-3/17879-2024 գրությունը, ՀՏԶՀ Ծրագրերի իրականացման և վերահսկողության վարչության զեկուցագիրը, նախագծող կազմակերպության գրությունը և Կողմերի միջև 2025թ. հուլիսի 8-ին կնքված «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մ.Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի» վերանորոգման աշխատանքների պետական գնման **կնքված N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-1** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 1.3 կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

***«Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանելով մինչև 2026 թվականի մարտի 05-ը:»***

2. Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելվածի:

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

4. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

*5.* Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երեք օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ | «Արմանշին» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝ ՀՀ, ք. Վայք, Շահումյան 1/1 | Հասցե՝ ՀՀ, ք. Եղեգնաձոր Բաղդասարյան 14 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 09104376 | ՀՎՀՀ՝ 08915086 |
| Հ/Հ՝ 900011058626 | Հ/Հ՝ 220023330511000 | Հ/Հ՝ 220453331757000 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| Գործադիր տնօրեն Սարգիս Բադիրյան | Տնօրեն Վ. Կոստանյան | Տնօրեն Ա. Խաչատրյան |
| ------------------------------ /ստորագրություն/ | ------------------------------ /ստորագրություն/ | ------------------------------ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ | Կ.Տ |

Հավելված

2025թ. հուլիսի 8-ի
N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-1 ծածկագրով
պետական գնման պայմանագրի
«25» 12 2025թ.
կնքված N 4/2 համաձայնագրի

«Հավելված 2
2025թ. հուլիսի 8-ի
N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-1 ծածկագրով
պետական գնման պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մ.Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքների պետական գնման **N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-1** պայմանագրի

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մ.Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի վերանորոգման | *Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից* | 05.03.2026թ. |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ | «Արմանշին» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝ ՀՀ, ք. Վայք, Շահումյան 1/1 | Հասցե՝ ՀՀ, ք. Եղեգնաձոր Բաղդասարյան 14 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 09104376 | ՀՎՀՀ՝ 08915086 |
| Հ/Հ՝ 900011058626 | Հ/Հ՝ 220023330511000 | Հ/Հ՝ 220453331757000 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| Գործադիր տնօրեն Սարգիս Բադիրյան | Տնօրեն Վ. Կոստանյան | Տնօրեն Ա. Խաչատրյան |
| ------------------------------ /ստորագրություն/ | ------------------------------ /ստորագրություն/ | ------------------------------ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ | Կ.Տ |